ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-21/60-Պ

ք.Երևան

17-ը սեպտեմբեր 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Գրավիթի Փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արամայիս Հայրապետյանի մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել 2021թ. աշնանային եթերաշրջանի բացման 1.5-2.5 րոպե տևողությամբ հոլովակի (այսուհետ՝ Հոլովակ) և «Առավոտ լուսո» հաղորդաշարի գլխադրի նկարահանման բեմադրող ռեժիսորի և մոնտաժման աշխատանքների ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները և վճարել դրանց համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի նախնական հավանությանը ներկայացնել Հոլովակի բեմադրության իր տեսլականը: Կատարողը պարտավորվում է մեկնարկել Հոլովակի բեմադրության իրականացումը միմիայն ներկայացված նախագիծը Պատվիրատուի հավանությանն արժանացած լինելու դեպքում: Ընդ որում, Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի ներկայացրած նախագծին ծանոթանալ և դիրքորոշում հայտնել այնպիսի ողջամիտ ժամկետում, որի պարագայում Կատարողը չի զրկվի սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները պատշաճ մատուցելու իրական հնարավորությունից: Կողմերն արձանագրում են, որ նախագիծը պատրաստելիս Կատարողը պետք է հաշվի առնի Պատվիրատուի ֆինանսական, տեխնիկական, աշխատուժի հնարավորությունները, Պատվիրատուի նկատմամբ սահմանված օրենսդրական պահանջները և պատրաստի այնպիսի նախագիծ, որն իրականացնելն իրատեսական կլինի Պատվիրատուի առկա ռեսուրսների պայմաններում:

1.3. Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրով սահմանված պայմանները կիրառելի են Կողմերի միջև մինչև Պայմանագրի ստորագրումը առաջացած հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես, 2021 թվականի սեպտեմբերի 06-ից սեպտեմբերի 17-ը առաջացած հարաբերությունների նկատմամբ:

1.4. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի կողմից կամ նրա մասնակցությամբ ստեղծված՝ հեղինակային իրավունքի և/կամ հարակից իրավունքների օբյեկտ համարվող ստեղծագործությունների (այսուհետ՝ Ստեղծագործություններ) նկատմամբ բոլոր գույքային իրավունքները պատկանում են Պատվիրատուին:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի Ստեղծագործություններն օգտագործել սեփական հայեցողությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր ձևերով և եղանակներով, հեղինակային իրավունքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործողության ողջ ժամկետում, առանց տարածքային սահմանափակման՝ ամբողջ աշխարհում:

2.3. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման շրջանակներում Կատարողի կողմից օգտագործվող հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների օգտագործման իրավաչափության համար պատասխանատվությունը կրում է Կատարողը:

2.4. Կողմերն արձանագրում են, որ Կատարողի ներգրավվածությունը Հոլովակի արտադրության գործընթացին որևէ կերպ չի հանգեցնում Հոլովակի նկատմամբ Պատվիրատուի ունեցած իրավունքների ծավալի փոփոխման: Հոլովակի նկատմամբ բոլոր բացառիկ գույքային և ոչ գույքային իրավունքները (հեղինակային, հարակից և այլ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված առավելագույն ծավալով, առանց տարածքային սահմանափակման և համապատասխան իրավունքների գործողության ամբողջ ժամանակահատվածում, պատկանում են Պատվիրատուին:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

3.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետում,

3.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

3.1.3. Պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս,

3.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

3.1.5. Ցանկացած պահի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կատարողին,

3.1.6. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

3.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

3.2.1. Կատարողին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով, տրամադրել Կատարողի ներկայացուցիչներին Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն, Հոլովակի մասնակիցների, Հոլովակի արտադրության ժամանակացույցի, Հոլովակի արտադրությանը ներգրավված տեխնիկական միջոցների և անձնակազմի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, նշանակել սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու կոնտակտային անձ, ով ողջամտության սահմաններում Կատարողին կապահովի Ծառայությունների պատշաճ մատուցման համար անհրաժեշտ, սակայն սույն կետում չթվարկված այլ տեղեկատվությամբ և այլն,

3.2.2. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան պատշաճ մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում հայտնել Կատարողին,

3.2.3. Վճարել Կատարողին պատշաճ մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

3.3. ***Կատարողն իրավունք ունի՝***

3.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 3.2.1 կետով սահմանված պայմանները,

3.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

3.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

3.4. ***Կատարողը պարտավոր է՝***

3.4.1. Ինչպես սոցիալական մեդիա հարթակներում իր պաշտոնական էջերի միջոցով, այնպես էլ որևէ այլ հարթակներում առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության չտարածել որևէ տեղեկատվություն սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ Հոլովակի բեմադրության գաղափարի, Հոլովակի հեռարձակման ենթադրվող ժամկետների, Հոլովակում ներգրավված մասնակիցների, կամ Հոլովակին վերաբերող որևէ այլ հանգամանքի վերաբերյալ, ինչպես նաև երաշխավորել Ծառայությունների մատուցման գործընթացում աշխատանքային, ծառայությունների մատուցման կամ որևէ այլ պայմանագրի հիման վրա ներգրավված անձանց կողմից այդպիսի տեղեկատվության գաղտնիության պահպանումը,

3.4.2. Ծառայությունները մատուցել սույն Պայմանագրով սահմանված ժամկետում, ամբողջությամբ և պատշաճ որակով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխան,

3.4.3. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

3.4.4. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս, սույն Պայմանագրի 3.1.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց անհապաղ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

3.4.5. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված սույն Պայմանագրի կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներին,

3.4.6. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել մատուցված Ծառայությունների ընդունման ընթացքում հայտնաբերված թերությունները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունների արժեքը կազմում է 3 016 000 (երեք միլիոն տասնվեց հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը: Սույն կետով սահմանված Պայմանագրի գինը ներառում է Ծառայությունների մատուցման համար Կատարողի կողմից իրականացվելիք բոլոր ծախսերը:

4.2. Պատվիրատուն սույն Պայմանագրի գինը վճարում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծառայությունների մասամբ մատուցման դեպքում, Պատվիրատուն չի հասնի սույն Պայմանագրի կնքման պահին իր հետապնդած նպատակին և կկորցնի Ծառայությունների նկատմամբ հետաքրքրությունը, Կողմերն արձանագրում են, որ Ծառայությունները մատուցված կհամարվեն միմիայն ամբողջ Հոլովակի պատշաճ բեմադրման դեպքում, հակառակ պարագայում Պատվիրատուն չի կրի փաստացի մատուցված Ծառայությունների համար վճարելու որևէ պարտավորություն:

5.2. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

5.3. Հանձնման-ընդունման ակտը Կատարողի կողմից ներկայացվելու օրվանից 5 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված

Ծառայությունների որակը և առարկությունների բացակայության դեպքում՝ հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

5.4. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 5.2. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ:

5.5. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 5.2. կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված Պատվիրատուին ներկայացնելու ամսաթվով և Պատվիրատուն կրում է պարտավորություն տվյալ ժամկետին հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը հաստատել Կատարողի ներկայացրած հաշիվ-վավերագիրը և սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել դրանով նախատեսված գումարը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Ծառայությունները թերություններով մատուցելու դեպքում Պատվիրատուն իրավասու է Կատարողից գանձել տուգանք՝ սույն Պայմանագրի ընդհանուր արժեքի 20 (քսան) տոկոսի չափով:

6.3. Կատարողի կողմից Ծառայություններն ընդգրկող առանձին գործողությունների կատարման ժամանակացույցի խախտման դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պայմանագրի ընդհանուր արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4. Սույն Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքի և տույժի գումարները կարող են հաշվարկվել և հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարից:

6.5. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

6.6. Այն դեպքում, երբ Կատարողը Ծառայությունները մատուցելիս թույլ է տվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների այնպիսի խախտում, ինչի համար Պատվիրատուն և/կամ վերջինիս գործադիր մարմնի ղեկավարը ենթարկվել են պատասխանատվության, ապա Կատարողը պարտավոր է հատուցել Պատվիրատուի և/կամ վերջինիս գործադիր ղեկավարի կրած ֆինանսական բեռը, եթե վերջիններիս նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցը դրել է ֆինանսական բնույթ:

6.7. Կատարողը պարտավոր է Պատվիրատուին զերծ պահել երրորդ անձանց կողմից Պատվիրատուին ներկայացված ցանկացած այնպիսի պահանջից, վեճից, հայցից, որոնք Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կամ երաշխիքների խախտման արդյունք են, ինչպես նաև հատուցել նման պահանջի, վեճի կամ հայցի արդյունքում Պատվիրատուին պատճառված բոլոր վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

6.8. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

6.9. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

7.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

8.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրած գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում՝ մինչև Կողմերի համար սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

9.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

9.3. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

9.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.5. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

9.6. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պատվիրատուի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից: Կատարողի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում, Կատարողը պարտավոր է ամբողջությամբ հատուցել վաղաժամկետ լուծման հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

9.7. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

9.8. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում

տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

9.9. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

9.11. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Գրավիթի Փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Աբովյան, Սարալանջ, շ. 13/31
ՀՎՀՀ՝ 03551985
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 19300203609600

Երամայիս Հայրապետյան
Տնօրեն